ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
«ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ» ԹՈՒՆԵԼԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ»
ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

RA MINISTRY of AGRICULTURE

STATE COMMITTEE of WATER SYSTEM
STATE AGENCY "PROGRAM
IMPLEMENTATION UNIT of REHABILITATION
of TUNNEL "ARPA-SEVAN"

0047. ք. Երևան, Ա. Արմենակյան 125
Հեռ. / ֆաքս՝ (37410) 65-11-16
Էլ. հասցե՝ vorotan-arpa-sevan@rambler.ru

N 01/33
«06» փետրվարի 2015թ

**«ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով**
**շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին**

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ ԳՆ ՋՏՊԿ «Արփա-Սևան» թունելի վերականգնման ԾԻԳ» ՊՀ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանք:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է՝ «ՀՀԳՆՋՏՊԿ-ԱՍԹՎԾԻԳ-15/2-ԾՀԱՊՁԲ-11/3»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am կայքի (այսուհետ՝ կայք) միջոցով, ոչ ուշ քան հայտերի բացման օրվա ժամը 11:00-ն:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է՝ ՀՀ ԳՆ ՋՏՊԿ «Արփա-Սևան» թունելի վերականգնման ԾԻԳ» ՊՀ-ի հաշվապահական հաշվառման և գնումների բաժնի գնումների մասնագետ Ն. Նիկոլյանը (հեռ. 010 65-11-16 ):

Հայտերը կբացվեն 18.02.2015թ, ժամը 11:00-ին կայքի միջոցով:

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ ԳՆ ՋՏՊԿ «Արփա-Սևան» թունելի վերականգնման ԾԻԳ» ՊՀ-ի կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերումը, որը խմբավորված է 40 չափաբաժինների:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է արժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

*ՀՀ կառավարության 10.02.2011թ N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի և էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների հրավերի պահանջների համաձայն՝ գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով (գնային առաջարկը յուրաքանչյուր չափաբաժնի համար անհրաժեշտ է ներկայացնել տվյալ չափաբաժնի ամբողջ քանակի համար առաջարկվող գնով) և կայքում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:*

Հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումը իրականացվելու է ըստ առանձին չափաբաժինների:

Հաղթող մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր:

Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում 5 օրացուցային օր է: Անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե հայտ է ներկայացրել միայն մեկ Մասնակից, որի հետ կնքվում է պայմանագիր:

Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո սույն հրավերով (ծանուցմամբ) սահմանված անգործության ժամկետի ավարտից 5 օրացուցային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով նախատեսված ժամկետում պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի կատարման ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Առդիր՝ 14 թերթ

ՏՆՕՐԵՆ՝ Ի. ՆԵՐՍԻՍՅԱՆ